«Հայաստանի առաջնորդներ»
հանրային երիտասարդական մրցույթի
անցկացման կարգ

1. Ընդհանուր դրույթներ

1.1.Սույն կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է «Հայաստանի առաջնորդներ» հանրային երիտասարադական մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) անցկացման կարգը, այդ թվում՝ Մրցույթին մասնակցության և առաջնորդության աշխատանքների իրականացման պայմանները, մասնակիցների թեկնածությունների գնահատման չափորոշիչները:

1.2.Մրցույթի կազմակերպիչն է Երևանի «Ռուսական գրքի տունը»: Մրցույթը իրականացվում է Հայ-ռուսական գործարար խորհրդի հետ համագործակցությամբ:

1.3.Մրցույթի, վերջինիս նպատակների, խնդիրների և անցկացման պայմանների մասին թիրախային լսարանին տեղեկացնելը և ծանուցելը վերապահված է մրցույթի կազմակերպչին և համագործակիցներին:

2. Մրցույթի անցկացման նպատակները և խնդիրները

2.1.Մրցույթը նպատակ ունի բացահայտել Հայաստանի ապագա առաջնորդներին և նպաստել նրանց առաջնորդական կարողությունների բացահայտմանը և մասնագիտական առաջընթացի ապահովմանը՝ ի շահ Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման և տարածաշրջանային ու միջազգային ինտեգրացիայի:

2.2.Մրցույթը խնդիր ունի.

- Պայմաններ ստեղծել սոցիալ-տնտեսական, նոր տեխնոլոգիաների և պետական կառավարման ոլորտներում Մրցույթի մասնակից երիտասարդների գիտելիքների կիրառման, առաջնորդական կարողությունների դրսևորման և Հայաստանում առաջընթացի հետագա զարգացման համար:
- Մրցույթի հաղթող մասնակիցներին ներգրավել բիզնեսի և արդյունաբերության, ինֆորմացիոն տեխնոլոգիաների առաջատար ընկերություններում ու պետական կառավարման համակարգում՝ խորհրդատուների հետ աշխատելու, գիտելիքները և առաջնորդական կարողությունները զարգացնելու ու կիրառելու համար:
- Աջակցել Մրցույթի հաղթող երիտասարդներին հաստատել նոր գործարար կապեր :

Յուրաքանչյուր տարի իրականացվող Մրցույթի շրջանակներում տնտեսության և պետական կառավարման ոլորտներում ձեռք բերած մասնագիտական ու առաջնորդման փորձի շնորհիվ նպատակ ունի բացահայտել և աջակցել Հայաստանի ապագա առաջնորդներին:

3. Մասնակցության պայմանները և մրցութային անվանակարգերը

3.1. Մրցույթին մասնակցելու են հրավիրվում 18-ից 35 տարեկան ՀՀ քաղաքացիները և օտարերկրացիները: Առանձին անվանակարգերում կարող են տարիքի և քաղաքացիության վերաբերյալ լրացուցիչ պայմաններ առաջադրվել:

3.2. Մրցույթն անցկացվում է սոցիալ-տնտեսական, նոր տեխնոլոգիաների և պետական կառավարման ու այլ ոլորտներին առնչվող անվանակարգերում, որոնք յուրաքանչյուր տարի հաստատվում են Կազմակերպչի կողմից՝ Մրցույթի Հոգաբարձուների խորհրդի հավանությամբ:

3.3. Մրցույթին մասնակցելու պայմաններն են.

- Առնվազն միջնակարգ կրթության առկայություն,
- առանձին անվանակարգերի համար կարող են սահմանվել լրացուցիչ պայմաններ՝ անվանակարգի ոլորտին առնչվող մասնագիտական կրթություն, օտար լեզուների իմացություն
- մրցույթին մասնակցությունը անվճար է:
- մրցույթի աշխատաքնքային լեզուն գրական հայերենն է:

3.4. Մրցույթին մասնակցելու գրանցման պահանջները.

- մրցույթին մասնակցելու համար թեկնածուն պետք է գրանցվի Երևանի «Ռուսական գրքի տան» ինտերնետային կայք էջի՝ https://homerusbook.am «Գրանցման անհատական հայտ» բաժնում, լրացնի գրանցման հայտը և հաստատի իր համաձայնությունը մրցույթի կանոններին, ինչպես նաև անձնական տվյալների մշակմանը,
- գրանցման հայտում թեկնածուն ներկայացնում է մրցույթի մասնակցության պայմանների վերաբերյալ պահանջված տեղեկատվությունը, ինչպես նաև ընտրված անվանակարգի ոլորտում մասնագիտական զարգացման իր պատկերացումներն ու նպատակները,
- թերի լրացված հայտերը չեն դիտարկվում:

4. Մրցույթի կարգը և անցկացման ժամկետները

4.1.Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝

- **1-ին փուլ՝** թեկնածուների հայտերի ընդունում, թեսթավորում և համագործակից կազմակերպություններից խորհրդատուների հետ պլանավորած աշխատանքներին համարժեք մասնակիցների ընտրություն,
- **2-րդ փուլ՝** առաջնորդական կարողությունների զարգացում և մրցույթի հաղթողների ընտրություն:

4.2.Մրցույթի առաջին փուլում գրավոր թեսթավորման են հրավիրվում գրանցման հայտերի գնահատման արդյունքում ընտրված թեկնածուները:

4.3.Հայտերի գնահատումը իրականացվում է կազմակերպչի կողմից ստեղծված հանձնաժողովում: Հանձնաժողովը կարող է պահանջել գրանցման հայտում թեկնածուների կողմից ներկայացված տեղեկատվությունը հավաստող փաստաթղթեր:

4.4.Գրավոր թեսթի գնահատման արդյունքում ընտրված թեկնածուները դիմում են ըստ նախընտրած անվանակարգերի համագործակից կազմակերպություններից առաջարկված աշխատանքներում ընգրկվելու համար:

4.5.Ըստ կազմակերպությունների մասնակիցների ընտրությունը իրականացնում է մրցութային հանձնաժողովը՝ Մրցույթի 1-ին փուլի ավարտին կազմակերպվող հարցազրույցների արդյունքերի հիման վրա:

4.6.Մրցույթի երկրորդ փուլում ընտրված մասնակիցները համագործակից կազակերպություններում խորհրդատուների աջակցությամբ սահմանված ժամկետում ներգրավվում են կազմակերպությունների կողմից պլանավորված և համարժեք աշխատանքներում՝ զարգացնելու իրենց առաջնորդական և կառավարչական կարողություններն ու հմտությունները:

4.7.Մրցույթի երկրրոդ փուլի ավարտին համագործակից կազմակերպություններից խորհրդատուները իրականացնում են մասնակցի աշխատանքների, ձեռք բերված արդյունքների և վարքագծի գնահատում :

4.8. Մրցույթի փուլերի ժամկետները յուրաքանչյուր տարի սահմանվում է Կազմակերպչի կողմից՝ Հոգաբարձուների խորհրդի հավանությամբ:

5. Մրցութային հանձնաժողովի կազմը

5.1.Մրցութային հանձնաժողովի կազմը ձևավորվում է Կազմակերպչի կողմից և ներառում է անվանակարգերի ոլորտների փորձագետների ու համագործակից կազմակերպությունների ներկայացուցիչների:

5.2.Մրցութային հանձնաժողովը հաղթողներին որոշելիս հաշվի է առնում առաջին փուլի թեսթի ու հարցազրույցների, համագործակից կազմակերպություններից խորհրդատուների գնահատականը և մասնակցի աշխատանքի արդյունքները:

5.3.Մրցութային հանձնաժողովը յուրաքանչյուր անվանակարգում Մրցույթի երկրորդ փուլի մասնակիցներից գնահատման արդյունքների հիման վրա որոշում է մրցույթի հաղթողներին.

5.4.Յուրաքանչյուր անվանակարգում հաղթող մասնակցին շնորհվում է 2.000.000 (երկու միլիոն) դրամ դրամական մրցանակ:

5.5.Մրցութային հանձնաժողովի որոշմամբ բացառիկ հմտություններ և կարողություններ ցուցաբերած մասնակցին կարող է շնորհվել Մրցույթի հոգաբարձուների խորհրդի նախագահի հատուկ մրցանակ՝

- Կրթաթոշակ Հայաստանի կամ Ռուսաստանի լավագույն բուհերի կառավարման բակալավրիատում կամ մագիստրատուրայում սովորելու համար
- Աջակցություն գործող, նոր ստեղծվող բիզնեսի կամ աշխատանքային այլ գործունեության զարգացմանը:

5.6.Հանձնաժողովի որոշմամբ կարող են սահմանվել նաև այլ մրցանակներ:

6. Մրցույթի հաղթողների պարգևատրումը

6.1.Մրցույթի հաղթողներին և մասնակիցներին հանձնվում են հավաստագրեր, որտեղ նշված է մրցանակային տեղը:

6.2.Մրցույթի հաղթողներին պարգևատրելու արարողությունը կանցկացվի Երևանում:

6.3.Մրցույթի հաղթողների մրցանակները ֆինանսավորվում են Կազմակերպչի կողմից, ինչպես նաև համագործակիցների կողմից կատարված նվիրատվություններից: